Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 87-Ն, 88, 94 ԵՎ 97 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 87-Ն որոշման վերնագրում և բովանդակության մեջ «և լրացումներ» բառերը ավելորդ են, բացի այդ որոշման 17-րդ և 18-րդ կետերը չեն համապատասխանում որոշման վերնագրին և հղումներին: Որոշմամբ կատարված գումարային փոփոխություններով խախտվել է բյուջեի հավասարակշռությունը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի՝ համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը:

«Թիվ 88» թվագրվածը որոշում չէ, քանի որ այն համայնքի ավագանու կողմից որպես որոշում չի ընդունվել: Անհրաժեշտ էր արձանագրությունների գրանցամատյանում նշվածի վերաբերյալ ընդամենն արձանագրել:

Թիվ 94 որոշման նախաբանում <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 118-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին կատարված հղումը սխալ է: Հղում պետք է կատարել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին: Բացի այդ, որոշման 4-րդ կետով նախատեսված, համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասերի հատակագծերը բացակայում են:

Թիվ 97 որոշման հղումը թերի է: Անհրաժեշտ է հղում կատարել նաև Անի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 26-ի թիվ 5-Ա որոշմամբ ընդունված <<Համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգ>>-ի համապատասխան կետին: Բացի այդ, որոշմամբ Գևորգ Կժոյանին և Հովհաննես Ասլանյանին տրամադրված գումարների չափերը չեն համապատասխանում նշված կարգի 18-րդ կետին:

Կատարող՝ Վ. Հովհաննիսյան
30.01.2020թ.